



This project is funded by the European Union



22 նոյեմբերի, 2018թ.

**ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դիտորդական առաքելության  
ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
(դիտարկման ժամանակահատվածը՝ նոյեմբերի 5-20, 2018թ.)**

**Դիտորդական առաքելության մասին**

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպության և «Ռեստարտ» քաղաքացիական նախաձեռնության կողմից: Առաքելության գործընկերն է Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը:

«Ականատես»-ի նպատակն է նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը և դրանց նկատմամբ հանրային անկողմնակալ հսկողությանը, ընտրական գործընթացների օրինավորությանը:

«Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (դաշինքի), թեկնածուի օգտին կամ դեմ:

2018 թ. դեկտեմբերի 9-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համատեքստում «Ականատես» դիտորդական նախաձեռնությունն իրականացնում է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելություն Հայաստանի ամբողջ տարածքում:

---

*Սույն առաքելությունն իրականացվում է Եվրոպական Միության, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Չարգացման Գործակալության, Ազգային ժողովրդավարական ինստիտուտի, ժողովրդավարության ազգային հիմնադրամի և Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:*

*Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Ականատես» դիտորդական առաքելությունը ու դրա անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուների տեսակետները:*



## Երկարաժամկետ դիտորդություն

Երկարաժամկետ դիտորդական առաքելության շրջանակներում նախաձեռնությունը ներգրավել է 36 երկարաժամկետ դիտորդ՝ հանրապետության 38 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում դիտարկելու և գնահատելու նախընտրական և հետընտրական գործընթացները, այդ թվում՝ ընտրությունների վարչարարությունը, ընտրողների ցուցակների պատշաճությունը, թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի չարաշահումը, վերահաշվարկը, բողոքների քննությունը, գործողությունների համապատասխանությունը ժամանակացույցին և այլն: Դիտորդները տեղերում աշխատում են ընտրական հանձնաժողովների, կուսակցությունների/դաշինքների և դրանց թեկնածուների նախընտրական շտաբների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ՉԼՄ-ների, քաղաքացիների հետ:

Տվյալների հավաքագրումը կատարվում է գրասենյակային հետազոտության, առցանց բաց տվյալների վերլուծության, անմիջական դիտարկումների, պաշտոնական հարցումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև մամուլի լուսաբանումներին հետևելու միջոցով: Տեղերում դիտորդները մասնակցելու և հանդիպելու են տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների, կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների նախընտրական շտաբների, ոստիկանության, լրատվամիջոցների, դիտորդական առաքելությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ընտրական գործընթացի այլ մասնակիցների հետ: Տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով՝ ստացված տվյալները ստուգվելու են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության ընթացքում դիտորդները հավաքագրելու են քանակական և որակական տվյալներ, որոնք ենթարկվելու են վերլուծության և ամփոփվելու են նախաձեռնության զեկույցներում, տեղեկագրերում, մամուլի հաղորդագրություններում և վիզուալ նյութերում: Ընտրական գործընթացի վերաբերյալ արձանագրված խախտումների հիման վրա, ըստ նպատակահարմարության, կազմվելու և ներկայացվելու են բողոքներ/հայցեր/դիմումներ վարչական, դատական և իրավապահ մարմիններին:

Դիտորդության վերաբերյալ ընթացիկ տեղեկատվությունը հրապարակվելու է «Ականատես» դիտորդական նախաձեռնության ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև անդամ կազմակերպությունների ինտերնետային կայքերում և ֆեյսբուքյան էջերում:



---

## Դիտարկման արդյունքներ և առաջարկություններ

2018թ. նոյեմբերի 2-ին ՀՀ նախագահն ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություն նշանակելու վերաբերյալ հրամանագիրը՝ ընտրությունները 2018թ. դեկտեմբերի 9-ին նշանակելու մասին: Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ նախընտրական քարոզչությունը սկսվելու է նոյեմբերի 26-ին:

«Ականատես» դիտորդական առաքելության երկարաժամկետ դիտորդությունը մեկնարկել է 2018 թ. նոյեմբերի 5-ին: Սույն ժամանակահատվածում դիտարկման առարկա են հանդիսացել ընտրությունների վարչարարության գործընթացը, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) գործունեությունը և Տարածքային ընտրական հանձնաժողովների կազմը, ինչպես նաև ընտրողների ցուցակները, ընտրությունների օրվա նշանակումից հետո տեղի ունեցող քարոզչությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը:

### *Ընտրական հանձնաժողովներ*

2018թ. նոյեմբերի 2-ին ՀՀ ԿԸՀ-ն սկսել է կազմակերպչական աշխատանքները: Մինչև ս.թ. նոյեմբերի 20-ը տեղի է ունեցել խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ 7 նիստ: Ընդհանուր առմամբ կազմակերպչական աշխատանքները ընթանում են օրենքով սահմանված ժամանակացույցի համաձայն:

Տարածքային հանձնաժողովների կազմի մասնակի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տարածքային հանձնաժողովների կազմը հիմնականում մնացել է նույնը և այնտեղ հիմնականում ներառված չեն անձինք, որոնք օրենքի համաձայն իրավունք չունեն լինել ընտրական հանձնաժողովի անդամ: Այդուհանդերձ, արձանագրվել են փաստեր, որ հանձնաժողովի անդամները նախկինում դրսևորել են անօրինական վարքագիծ: Մասնավորապես, թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի (Շենգավիթ վարչական շրջան) նախագահ Նորիկ Երանյանը 2018թ. սեպտեմբերի 23-ին՝ Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների օրը, թիվ 8/05 ընտրատեղամասում ֆիզիկական ուժի գործադրմամբ խոչընդոտել է լրագրողի գործունեությունը:<sup>1</sup> Դիտորդական առաքելության ստուգումը շարունակվում է և կավարտվի ս.թ. նոյեմբերի 26-ին:

**Հորդորում ենք Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ) հետևել Տարածքային ընտրական հանձնաժողովների կազմի՝ նախկինում դրսևորված վարքագծին և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ փոխարինելու այն անդամներին, որոնք կոպտորեն խախտել են Ընտրական օրենսգրքի դրույթները: Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում առաջարկվող անդամների նախկինում դրսևորած վարքագծին և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ բացառելու նման անձանց ներգրավումը:**

---

<sup>1</sup> <https://www.aravot.am/2018/09/24/982974>, <https://news.am/arm/news/472705.html>, <https://www.shantnews.am/news/view/159605.html>



---

## **Նախընտրական քարոզչության կարգ**

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը Ընտրական օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու սահմանված կանոնները:<sup>2</sup> Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է 2018թ. նոյեմբերի 26-ին և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ՝ դեկտեմբերի 7-ին ժամը 24:00-ին: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը և մինչև պաշտոնական քարոզչության մեկնարկը որևէ սահմանափակում չկա:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցություններն իրավունք ունեն անարգել տարածելու քարոզչական տպագիր և այլ նյութեր:<sup>3</sup> Նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում քարոզչական նյութեր փակցնելու համար առանձնացնի անվճար տեղեր: Հանրության համար տեսանելի քարոզչական նյութեր կարող են փակցվել հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում ..., ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում և այլն: Քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ ներառեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ: Օրենքով սահմանված վավերապայմանների բացակայությամբ քարոզչական տպագիր նյութեր տարածելն առաջացնում է վարչական պատասխանատվություն:<sup>4</sup>

Ընդհանուր առմամբ էական խախտումներ չեն արձանագրվել: Դիտարկումը ցույց է տվել, որ քարոզչանյութեր փակցվում են փողոցային լապտերների և էլեկտրասյունների վրա:

**Կոչ ենք անում կուսակցություններին/դաշինքներին իրենց նախընտրական քարոզչության ընթացքում հետևել քարոզչության համար սահմանված կանոններին, նույնիսկ այն պարագայում, երբ պաշտոնապես քարոզչության մեկնարկը դեռ չի տրվել:**

---

<sup>2</sup> ՀՀ ընտրական օրենսգրք, հոդված 19

<sup>3</sup> ՀՀ ընտրական օրենսգրք, հոդված 21

<sup>4</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրք, հոդված 40.1



---

## *Ընտրակաշառք*

ՀՀ օրենսդրության համաձայն ընտրողներին կաշառք տալը կամ ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը համարվում են քրեորեն պատժելի արարք <sup>5</sup>:

Հայտնի են մի շարք դեպքեր, երբ գործադիր իշխանության ներկայացուցիչները քաղաքացիների հետ իրենց հանդիպումներում հորդորում են ձեռնպահ մնալ ընտրակաշառք վերցնելուց:

Առաքելության դիտորդները չեն բացահայտել փաստեր, որոնք կվկայեին կաշառքի փաստի մասին: Միևնույն ժամանակ, ՉԼՄ-ներում առկա են լուրեր ընտրակաշառք բաժանելու նորամուծությունների վերաբերյալ: Ըստ լուրերի՝ կուսակցություններից մեկը ընտրությունների ժամանակահատվածում գրանցում է բազմաթիվ անհատ ձեռներեցների, որոնք ստանդարտ ընտրակաշառքի փոխարեն ստանալու են աշխատավարձ՝ կուսակցության օգտին ձայներ բերելու համար:<sup>6</sup>

**Կոչ ենք անում բոլոր կուսակցություններին ու դաշինքներին, ինչպես նաև դրանց անհատ թեկնածուներին զերծ մնալ գումարով քաղաքացիների ձայները գնելու պրակտիկայից, ինչպես նաև իրավապահ մարմիններին խորությամբ և համակողմանիորեն ուսումնասիրելու նման փաստերը:**

## *Վարչական ռեսուրսի չարաշահում*

«Վարչական ռեսուրս» կոնցեպտը սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ, սակայն, ըստ միջազգայնորեն ընդունված նորմերի՝ վարչական ռեսուրսը քաղաքական պաշտոնյաների ու հանրային այլ ծառայողների տնօրինության տակ գտնվող իրավական, մարդկային, ֆինանսական, նյութական և ոչ նյութական միջոցներն են: Ընտրությունների ժամանակ դրանց օգտագործումը հոգուտ որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ և կարող է ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ըստ լրատվամիջոցների՝ առկա են մի քանի ահազանգեր առ այն, որ, դեռևս քարոզչության պաշտոնական ժամկետը չսկսված, արդեն իսկ կան վարչական ռեսուրսի չարաշահման դեպքեր, որոնք ներկայումս ճշգրտվում են առաքելության երկարաժամկետ դիտորդների կողմից: Միևնույն ժամանակ, կան դեպքեր, երբ բարձրաստիճան պաշտոնյաները իրենց աշխատակազմերի հետ հանդիպումներում կամ հրապարակային հորդորում են ձեռնպահ մնալ վարչական ռեսուրսի կիրառումից: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ իշխանության ներկայացուցիչների կողմից ընտրակաշառքից զերծ մնալու կոչերն առավել հաճախակի են հնչում, քան վարչական ռեսուրսի օգտագործումից խուսափելու հորդորները:

---

<sup>5</sup> ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 154.2

<sup>6</sup>



Առաջարկում ենք պետական կառույցների ղեկավարներին, հաշվի առնելով մասնավորապես վարչական ռեսուրսի վերաբերյալ թյուրընկալումները ինչպես հանրության, այնպես էլ հանրային ծառայողների շրջանում, հանդես գալ խստագույն հանձնարարականներով՝ բացառելու վարչական ռեսուրսի չարաշահումը: Կոչ ենք անում հանրային ծառայողներին գերծ մնալ իրենց վստահված ռեսուրսները չարաշահելուց՝ որևէ կուսակցության, դաշինքի կամ թեկնածուի օգտին:

### *Ատելության խոսք*

Դեռևս քարոզչությունը պաշտոնապես չի սկսվել, և ընդհանուր իրավիճակը լարված չէ, սակայն արդեն իսկ սկսել է հնչել ատելության խոսք, որը թիրախավորում է մարդկանց կամ մարդկանց խմբերի՝ իրենց կրոնական և սեռային, ինչպես նաև քաղաքական տարբերող հատկանիշների հիման վրա, ինչը կարող է կամա թե ակամա մղել բռնության:

Մասնավորապես, նման կոչեր է արել Հայաստանի Հանրապետական կուսակցության ցուցակում ներառված Էդուարդ Շարմազանովը Նոյեմբերի 13-ի իր ելույթում՝ կոչ անելով, որ իրեն միանան նրանք «ովքեր դեմ են աղանդավորության քարոզին, պղծության և համասեռամոլության քարոզին»:<sup>7</sup> Նաև տարբեր կուսակցությունների անդամների անձնական ֆեյսբուքյան էջերում տարբեր քաղաքական ուժերի կողմից հնչում են միմյանց ուղղված վիրավորական արտահայտություններ:

**Կոչ ենք անում ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցություններին/ կուսակցությունների դաշինքներին գերծ մնալ ինչպես ընտրապայքարի ընթացքում միմյանց նկատմամբ վիրավորական ու վարկաբեկող արտահայտություններ օգտագործելուց, այնպես էլ խտրական ու ատելության խոսքի միջոցով ընտրազանգված գրավելու գայթակղությունից: Նման վարքագիծը արգելված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 19-րդ և 20-րդ հոդվածների դրույթներով:**

### *Ընտրողների ցուցակներ*

Հայաստանի Հանրապետության բնակչության ռեգիստրում բնակչության թիվը 2,969,200 է, որը պակասել է 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ գրանցված թվից 24,700-ով: Ընտրողների թիվը 2,574,916 է, որն ավելին է նշված ժամանակամիջոցից՝ 10,582-ով: Ըստ ընտրատարածքների՝ ընտրողների առավելագույն աճ՝ 2,941 հոգի գրանցվել է թիվ 2 ընտրատարածքում (Երևանի Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջաններ), 2,789 հոգի՝ թիվ 3 ընտրատարածքում (Երևանի Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջաններ), և 2,428 հոգի՝ թիվ 10 ընտրատարածքում (Կոտայքի մարզ): Ընտրողների քանակն առավել նվազել է թիվ 11 ընտրատարածքում (Շիրակի մարզ)՝ 2440-ով, թիվ 9

<sup>7</sup> <https://www.youtube.com/watch?v=thRqg0OulNs&t=7s>, 3:40ր-ից



ընտրատարածքում (Լոռու մարզ)՝ 1,138-ով և թիվ 12 ընտրատարածքում (Սյունիքի և Վայոց ձորի մարզեր)՝ 1,118-ով:

ՀՀ բնակչության, Ազգային ժողովի ընտրությունների ընտրողների թվերը, ըստ armstat.am և elections.am կայքերում հրապարակված տեղեկատվության

Ըստ ընտրական տարածքների

2017թ.					տարբերությունները 2018 և 2017 թթ.		2018թ.		
Մշտական բնակչություն	Ընտրական տարածք	Վարչական շրջան/մարզ	Ընտրողներ	Ընտրողների թվերի %-ները բնակչության թվերից	բնակչության	ընտրողների	Մշտական բնակչություն	Ընտրողներ	Ընտրողների թվերի %-ները բնակչության թվերից
257800	<b>թիվ 1</b>	Ավան, Լոր Լորք, Քանաքեռ-Զեյթուն	198537	77.0	1200	1575	259000	200112	77.3
267000	<b>թիվ 2</b>	Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն	210687	78.9	-300	2941	266700	213628	80.1
275800	<b>թիվ 3</b>	Մալաթիա-Մեքաստիա, Շենգավիթ	222434	80.7	2700	2789	278500	225223	80.9
274000	<b>թիվ 4</b>	Կենտրոն, Լորք Մարաշ, Էրեբունի, Լուրմաշեն	206883	75.5	1200	2152	275200	209035	76.0
259000	<b>թիվ 5</b>	Արարատի մարզ	220309	85.1	-1300	1346	257700	221655	86.0
266300	<b>թիվ 6</b>	Արմավիրի մարզ	232232	87.2	-1800	1400	264500	233632	88.3
129200	<b>թիվ 7</b>	Արագածոտնի մարզ	117455	90.9	-2500	79	126700	117534	92.8
231400	<b>թիվ 8</b>	Գեղարքունիքի մարզ	187263	80.9	-2400	782	229000	188045	82.1
223200	<b>թիվ 9</b>	Լոռու մարզ	238975	107.1	-7400	-1138	215800	237837	110.2
253700	<b>թիվ 10</b>	Կոտայքի մարզ	237419	93.6	-2300	2428	251400	239847	95.4
241500	<b>թիվ 11</b>	Շիրակի մարզ	231982	96.1	-7400	-2440	234100	229542	98.1
189900	<b>թիվ 12</b>	Սյունիքի և Վայոց ձորի մարզեր	152805	80.5	-2200	-1118	187700	151687	80.8
125100	<b>թիվ 13</b>	Տավուշի մարզ	107353	85.8	-2200	-214	122900	107139	87.2
2993900	ԸՆՏՐՈՒՄ	Հանրապետությունում	2564334	85.7	-24700	10582	2969200	2574916	86.7



Ընտրողների ցուցակները շարունակում են պարունակել խնդրահարույց տվյալներ, որոնք հարցականի տակ են դնում դրանց համապատասխանությունը իրականությանը: Այս պահին իրականացված վերլուծության արդյունքներով, ընտրողների ցուցակներում բացակայում են 571 ընտրողի հասցե: Բավականին բարձր է բարձր տարիք ունեցող ընտրողների թիվը: Մասնավորապես, ցուցակում կան 8,826 ընտրող, որոնց տարիքը 90 է և ավելի, ընդ որում կա 100 տարեկանից բարձր՝ 117 ընտրող և 110-ից բարձր՝ 3 ընտրող:

885 հասցեներում գրանցված է ավելի քան 20 ընտրող, ընդ որում՝ 100-ից ավել ընտրող կա 13 հասցեում:

	2017թ. խորհրդարանական ընտրություններ	2018թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններ
20-ից 29	666 (15297 ընտրող)	667 (15271 ընտրող)
30-ից 39	104 (3431 ընտրող)	113 (3703 ընտրող)
40-ից 49	34 (1491 ընտրող)	36 (1581 ընտրող)
50-ից 59	17 (916 ընտրող)	18 (966 ընտրող)
60-ից 99	23 (1727 ընտրող)	38 (1879 ընտրող)
100 և ավել	12 (2149 ընտրող)	13 (2257 ընտրող)

**Կոչ ենք անում ոստիկանությանը՝ շուտափույթ լուծել հասցե չունեցող ընտրողներին հասցեներ տրամադրելու հարցը, կամ հասցեների առկայության դեպքում՝ տեղադրել դրանք ընտրողների վերջնական ցուցակներում:**

**Չոլյս ենք հայտնում, որ ընտրացուցակներում ներառված, բայց հանրապետությունից բացակայող ընտրողների անունները չեն օգտագործվի այլոց կողմից:**